ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/201

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21192-2019 գրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.12.2019թ. թիվ 01/61-26556 գրության հիման վրա, 20.12.2019թ. թիվ 26/26-1/21192-2019 գրությամբ նախաձեռնել է «Յդկադ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Յդկադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Յդկադ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/201 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.12.2019թ. թիվ 01/61-26556 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 22.02.2019թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի Տեխնիկական բնութագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի ժամկետի ավարտը սահմանված է սույն թվականի դեկտեմբերի 20-ը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի 05.12.2019թ. թիվ 16/25932 գրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել է մասնակի, Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի մասնակի (25 987 800 ՀՀ դրամի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/201 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 22.02.2019թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով

սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 13.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21192-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.12.2019թ. թիվ 01/61-26556 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 22.02.2019թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 30 790 000 ՀՀ դրամ:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում 2019 թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Ընկերությանն ուղղված 17.07.2019թ. թիվ 16/13790, 23.07.2019թ. թիվ 16/14151, 25.07.2019թ. թիվ 16/14335, 26.08.2019թ. թիվ 16/16678 գրություններով Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագիրը կնքելու օրվանից անցել է հինգ ամիս, սակայն աշխատանքները կատարվում են խիստ դանդաղ տեմպերով և առ այսօր Ընկերության կողմից ներկայացվել է մեկ կատարողական ակտ՝ 2 491 844 դրամի: Վարչության կողմից Ընկերությանը ներկայացվել է մի շարք վերանորոգման կարիք ունեցող փողոցների մայթերի թվով 37 հասցեներ, որոնցում մինչ օրս աշխատանքները չեն սկսվել: Հանձնարարվում է 1-2 օրվա մեջ սկսել բարեկարգման աշխատանքները:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն հայտնել է, որ հակառակ դեպքում կկիրառվի կապալի պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված դրույթը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանն ուղղված 05.12.2019թ. թիվ 16/25932 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացվել է երկու կատարողական ակտ ընդհանուրը 4 802 200 դրամի, որը կազմում է պայմանագրային գումարի 15.6%-ը:

Վարչության կողմից բազմիցս բանավոր, ինչպես նաև Ընկերությանն ուղղված գրություններով ներկայացվել են վերանորոգման կարիք ունեցող փողոցների մայթերի հասցեներ և տրվել է հանձնարարականներ, որոնք չեն կատարվել, իսկ նախազգուշացումները անտեսվել են:

Ամփոփելով հայտնել է, որ հաշվի առնելով, որ այժմ ձմեռային եղանակային պայմաններում հնարավոր չէ ավարտին հասցնել պայմանագրով նախատեսված աշխատանքները, խնդրել է մասնակի լուծել «3դ կաղ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 13.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) ***Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,***

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Երևանի քաղաքապետարանի և «Յդկադ» ՍՊԸ-ի միջև 22.02.2019թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2019 թվականի դեկտեմբերի 20-ը իրականացնել 30 790 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ վերանորոգման աշխատանքներ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետներում ամբողջությամբ չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները և Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, համաձայն գործում առկա հանձնման-ընդունման թիվ 1 և թիվ 2 արձանագրությունների՝ իրականացվել են ընդամենը 4 802 269 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ վերանորոգման աշխատանքներ:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.12.2019թ. թիվ 26/26-1/21192-2019 գրությամբ «Յդկադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Յդկադ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**